ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԹԻՎ 14 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 10-Ա
«25» մարտի 2025թ.

ԹԻՎ 14 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի 2025 թվականի մարտի «24»-ի թիվ 1 արձանագրությունը, մարտի «25»-ի թիվ 2 և թիվ 3 արձանագրությունները՝ տեղամասային հանձնաժողովի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման փաստի մասին և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 8-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի «12»-ի «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակելու մասին» N 6-Ա որոշման 1-ին կետի.

1) 1-ին ենթակետի «Բաղդասարյան Պապին Վահագնի» բառերը փոխարինել «Միսակյան Մերի Աշոտի» բառերով.
2) 4-րդ ենթակետի «Տերչանյան Արմեն Սամսոնի» բառերը փոխարինել «Ավանեսյան Արկադի Վրեժի» բառերով.
3) 5-րդ ենթակետի «Աղամալյան Ստեփան Արսենի» բառերը փոխարինել «Հակոբյան Դավիթ Հարությունի» բառերով.

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ ***Գ.Նազարյան***

L.S